«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

2019-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ 2019-2020 ԹԹ.

Քոլեջի 2019-2024 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և գործողությունների պլանի արդյունքների գնահատում իրականացնելու նպատակով ՈԱ պատասխանատուի կողմից մշակվել է քոլեջի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները /ԳԱՑ-եր/՝ ըստ 7 հիմնական ոլորտների

1. ***Կառավարում և վարչարարություն***
2. ***Կրթական գործունեություն***
3. ***Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ***
4. ***Ուսանողակենտրոն քաղաքականություն***
5. ***Արտաքին կապեր և միջազգայնացում***
6. ***Արդիական հետազոտություններ և նորարարություն***
7. ***Որակի ապահովման ներքին համակարգ***

Քոլեջի ստորաբաժանումների 2019-2020 ուստարվա գործողությունների հիման վրա հավաքագրվել, վերլուծվել և ընդհանրացվել է Քոլեջի մեկ տարվա գործունեությունը՝ ըստ ընդունված **ԳԱՑ-երի:**

ՆՊԱՏԱԿ 1.ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և պարտականությունների արդյունավետ ու հստակ գործառություն:

Ցուցանիշ 1. Ըստ նոր կառուցվածքային սխեմայի պաշտոնի անձնագիր: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել և մշակվել է Քոլեջի նոր կառոցվածքային սխեման: Վերանայված կառուցվածքային սխեմային համապատասծան մշավել է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը, որը քննարկվել է Տնօրինական խորհրդում և ստացել է երաշխավորություն այն ներկայացնելու Ընդհանուր ժողով: Գործողության կատարողականի վերջնաժամկետ է նախատեսված՝ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակ:

(Հիմք՝ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերը (անձնագիր)» նախագիծ)

Ցուցանիշ 2. Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության ուղեցույց: Հաշվի առնելով այն, որ քոլեջի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, Քոլեջի կառավարման գործընթացում կարևորվել է նրա վրա ազդող առանցքային գործոնների վերհանումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը: 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում մշակվել և հաստատվել է «Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեթոդներ» ուղեցույցը, իրականացվել է Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, որն ընդգրկել է 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածը: Գործողության կատարողականի վերջնաժամկետ է նախատեսված՝ 2019-2020 ուստարի:

(Հիմքեր՝ «Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեթոդներ» ուղեցույց, Քոլեջի գործունության SWOT վերլուծության զեկույց)

Ցուցանիշ 3. Ռիսկերի բացահայտման և կառավարման գործող ընթացակարգ: Միջին մասնագիտական (Քոլեջի) ուսումնական հաստատության կարևորագույն խնդիրներից մեկը ռիսկերի բացահայտումն ու դրանց կառավարումն է: Ռիսկի կառավարումն այնպիսի գործընթաց է, որի նպատակն է հայտնաբերել Քոլեջի առջև ծառացած բոլոր ռիսկերը և համապատասխան ձևով դրանք կառավարել ու նվազեցնել:

Հաշվի առնելով այս հանգամանքը Տնօրենի հանձնարարությամբ ՈԱ պատասխանատուի կողմից մշակվել և հաստատման է ներկայացվել «Ռիսկերի բացահայտման և կառավարման» ընթացակարգը, որը շրջանառության մեջ կդրվի 2020-2021 ուստարվանից: 2021-2022 ուստարվա վերջում կներկայցվի տարեկան զկույց համապատասխան ընթացակարգի:

(Հիմք՝ «Ռիսկերի բացահայտման և կառավարման» ընթացակարգ)

Ցուցանիշ 4. Ֆինանսների բաշխման քաղաքականություն: ՈԱ պատասխանատուի և հաշվապահի համատեղ աշխատանքի արդյուքում, մշավել և հաստատվել է Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների: Քոլեջի ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականությունն իր մեջ ներառում է հաշվապահական հաշվառման խնդիրները, նպատակները, որոնք համապատասխանում են Քոլեջի 2019-2024 թթ. ԶՌԾ նպատակներին:

(Հիմքեր՝ Քոլեջի ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականություն, Քոլեջի 2020թ. բյուջեի նախագիծ)

Ցուցանիշ 5. ՊԻԳԲ փուլ Քոլեջի գործընթացներում: Քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացները նպատակաուղղված են որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, որն իր մեջ ներառում է գործընթացների իրականացում՝ հիմնված ՊԻԳԲ կառավարման սկզբունքի վրա: Քոլեջի կազմակերպական կառուցվածքի վերանայման

արդյունքում մշակվել և ներդրվել են ստորաբաժանումների տարեկան պլանավորման և կատարողականի (հաշվետվություն) նոր ձևաչափեր, մշակված համաձայն կազմած հնգամյա 2019-2024 թվականների համար: Նոր հաշվետվություններն իրենց ձևաչափով տարբերվում են նախորդ տարիների կատարողականներից: Սկսած 2019-2020 ուստարվանից ՈԱ պատասխանատուն 2021-2022 ուստարվա վերջում կիրականացնի հաշվետվությունների վերլուծություն, բացահայտելով ձեռքբերումներն ու խոչընդոտները, կտրամադրի խորհրդատվություններ և բարելավման առաջարկություններ համապատասխան մարմիններին:

(Հիմքեր՝ Ստորաբաժանման պլան և տարեկանկատարողականի օրինակ)

Ցուցանիշ 6. Գործող ՄՌԿ քաղաքականություն: Համաձայն 02.09.2019թ. Տնօրինական խորհրդով հաստատված ՄՌԿ քաղաքականության՝ Քոլեջում մասնագետների հավաքագրումն 2020-2021 ուստարվանից կիրականացվի մշակված պաշտոնի անձնագրի պահանջներին համաձայն:

- Դասախոսական կազմը (բաշխումն ըստ տարակարգերի. աստիճանակիր/առանց աստիճան
- Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
- Հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
- Դասախոսական կազմի տարիքային բաշխումը
- Մեկ ուստարում վերաորակավորված դասախոսների թիվը
- Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
- Ուսանող/դասախոս հարաբերակցությունը
- Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
- Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը ըստ ամբիոնների
- Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների)
- Աշխատողների թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը
- Դասախոսական կազմ/ոչ դասախոսական կազմ հարաբերակցություն

(Հիմք՝ ՄՌԿ քաղաքականություն)

Խնդիր 1.2. Քոլեջի Մանկավարժական համակազմի գործունեության արդյունավետության բարձրացում:

Ցուցանիշ 1. Կանոնակարգ, պլան-ժամանակացույց: Մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեության բարելավումը գտնվում է Քոլեջի ղեկավարության ուշադրության կենտրոնում: ՈԱ պատասխանատուի կողմից մշակվում է դասախոսական կազմի վերապատրաստման կազմակերպման ընթացակարգը, այն նախատեսվում է ներկայացնել 2021-2022 ուստարվա վերջում:

Ցուցանիշ 2. Արդիականացված լսարաններ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մոտ 600.000 ՀՀ դրամի վերանորոգման աշխատանքներ:

Ցուցանիշ 3. Պրակտիկաների կազմակերպման նոր ծրագրեր: Դեռ ընթացքի մեջ են:

Ցուցանիշ 4. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ: Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել փաստաթղթերի կառավարումը, շահակիցներին և հասարակությանը տեղեկացնել Քոլեջի որակի գործառույթներին: Քոլեջն համացանցային տիրույթում ներկայացվել է www.grigoris.am պաշտոնական կայքով, որն ներկա պահին արդիականացվում է, ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով: Քոլեջի ներքին և արտաքին շահակիցներին իրազեկումն իրականացվող ՄԿԾ-ների, իր գործունեության և արդյունքների մասին ապահովում է Քոլեջի ՄՌԿ և ընդհանուր բաժնի մասնագետը, ով նաև կայքի պատասխանատուն է: Քոլեջում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ամբողջական կներդրվի 2023-2024 ուստարվանից:

Ներկայումս քոլեջն փաստաթղթաշրջանառությունը իրականացնում է հետևյալ կերպ՝

- Քոլեջի էլ. հասցեի՝ grigoris16@mail.ru միջոցով (պաշտոնական գրություններ):

2019-2020 ուստարվա ընթացքում մուտք է արվել 680 նամակներ, գրություններ ԿԳՄՄՆ-ից, ՈԱԱԿ-ից, ՄԿՈՒԶԱԿ-ից, հայաստանյան և արտերկրի ուսումնական հաստատություններից, հասարակական կազմակերպություններից և այլ շահագրգիռ կազմակերպություններից, ելք՝ 350:

Քոլեջն 2019-2020 ուստարվանից **ՄԿԿՏՀ** ծրագրի միջոցով ինստիտուցիոնալ տվյալների, ՏՀՏ հագեցվածության, ֆինանսական ռեսուրսների կառավարման, ՄԿԾ-ների, դասախոսական կազմի, ուսանողների, քննաշրջանի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրման և պահպանման համար նշանակել է պատասխանատու անձ՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի /ԿԿՏՀ-ի գլխավոր ադմինիստրատորի/ հետ համագործակցելու և Քոլեջի տվյալները պատշաճ հավաքագրելու և ներբեռնելու համար:

Ցուցանիշ 5. Խորհուրդների և հանձնաժողովների կազմ: Քոլեջում գործում է՝ Ընդհանուր ժողովը, երկու հիմնական խորհուրդներ՝ Տնօրինական և մանկավարժական, ինչպես նաև ուսանողական խորհուրդը: Յուրաքանչյուր ուստարվա մեկնարկին ըստ անհրաժշտության վերանայվում են կազմերը (կից կազմերի հրամաններ):

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի **«Կառավարում և վարչարարություն»** չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 2.1. Ուսումնական գործընթացի բարելավեում

Ցուցանիշ 4. Դասալսումների նոր կարգ, դասալսումներ: Դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները բարելավելու նպատակով մշակվել և ներդրվել է «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման» կանոնակարգը իր համապատասխան հավելվածներով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդամենը 5 փոխադարձ դասալսումներ: Նոր կանոնակարգի դասալսումները պլանավրվում է իրականացնել 2020-2021 ուստարվա ընթացքում:

Խնդիր 2.2. Ապահովել Քոլեջում որակյալ կադրային ներուժ:

Ցուցանիշ 1. Անձնակազմի պաշտոնի անձնագիր: Դասախոսների ընտրության և ընդունելության մեխանիզմների բարելավման նպատակով 2019 թվականից մշակվել և ներդրվել է «Դասախոսական կազմի ձևավորման և ազատման» կանոնակարգը, և պաշտոնի անձնագրի նախագիծը: Հաջորդ կատարողականում կնեկայացվի ՄՌԿ և ընդհանուր բաժնի հաշվետվությունը:

Ցուցանիշ 2. Պահուստային դասախոսների էլեկտրոնային բազա*:* Աշխատանքները դեռ իրականացվում են:

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի **Կրթական գործունեություն** չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ*:*

ՆՊԱՏԱԿ 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Խնդիր: Համալրել և արդիականացնել նյութատեխնիկական ռեսուրսները:

Ցուցանիշ 1. Ռեսուրսների գնահատման զեկույց: Նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակի գնահատման գործընթացը դեռ ավարտված չէ: Արդյունքների ամփոփման տվյալների հիման վրա կմեկնարկի նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթացը:

Ցուցանիշ 2. Վերանորոգման աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 600.000 ՀՀ դրամի վերանորոգում:

Ցուցանիշ 3. Արդիականացված համացանց: Այս ուղղությամբ բանակցություններ են տարվում Յուքոմ ընկերության հետ:

Ցուցանիշ 5. Տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման ընթացակարգ: Քոլեջում առկա ռեսուրսների գնահատում վերաբերյալ զեկույց առկա չէ, սակայն ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բազմազանեցման և բարելավման նպատակով մշակվել է «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականությունը»: Նախատեսում է 2021-2022 ուստարվա ընթացքում իրականացնել հարցումներ և վերլուծելով արդյունքները իրականացնել բարելավումների միջոցառումներ:

Ցուցանիշ 6. Բյուջում զարացման ֆոնդի հոդված: Սկսած 2020թ. քոլեջի բյուջեում հատկացված է «Զարգացման ֆոնդ» հոդվածը, տաեկան առնվազն 10% միջոցներով:

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր: Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ցուցանիշ 1. Քոլեջի նոր պաշտոնական վեբ կայք, հաճախելիություն: Քոլեջի պաշտոնական վեբ կայքի մեկնարկը նախատեսվում է 2020-2021 ուստարվանից, հետևաբար, այս ցուցանիշի գնահատման համար ընտրված շահակիցների կարծիքները, որպես հաշվետվողականության միջոց, բացակայում են:

Ցուցանիշ 2. Խորհրդատվության ժամանակացույց: Ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունների բարելավման նպատակով մշակվել է «Ուսանողի ուղեցույցը», իսկ ամբիոններում հստակ ժամանակացույցը նախատեսվում է ներդնել 2020-2021 ուստարվանից:

Ցուցանիշ 4. Ըստ տարեկան պլանի միջոցառումներ: Ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացման նպատակով մշակվել և հաստատվել է Ուսանողական խորհրդի հնգամյա նոր ձևաչափի աշխատանքային պլանը: Վերանայվել է ուսանողների խրախուսման ընթացակարգերը:

Ցուցանիշ 5. Խորհուրդների կազմ, հանդիպումներ: Քոլեջում իրականացվող բարեփոխումների արդյունքում գործող կառավարման բոլոր մարմիններում ապահովված է ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը (կազմերի հրամաններ):

Ցուցանիշ 6. Գործող ուսանողի ուղեցույց, հանդիպումներ: Ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության

ոլորտում քոլեջի կառավարման հարցերի վերաբերյալ կարելի է արձանագրել, որ այն ամբողջովին գործում է:

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի ուսանողակենտրոն քաղաքականություն չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան ոչ բոլոր խնդիրներն են իրականացվել սահմանված ժամկետներում, կան մասամբ իրականացված և ընդհանրապես չիրականացված գործողություններ, որոնք անհրաժեշտ է վերհանել՝ հասկանալու խոչընդոտները կամ, գուցե, ոչ նպատակահարմարությունը դրանց իրագործման:

ՆՊԱՏԱԿ 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խնդիր: Ընդլայնել միջազգայնացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները:

Ցուցանիշ 1. Արտաքին կապերի քաղաքականություն (հանագործակցության ընդլայնում):

Ցուցանիշ 2. Գործող Արտաքին կապերի բաժին*:*

Ցուցանիշ 3. Դրամաշնորհային հավանական հիմնադրամների ցանկ*:*

Ցուցանիշ 4. Ծառայությունների մատուցման կարգ:

Արտաքին կապերի ՋԾ, Արտաքին կապերի քաղաքականություն՝ որպես Քոլեջի Արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող փաստաթղթեր, դեռևս առկա չեն: Արտաքին կապերի բաժինն իր գործունեությունը կմեկնարկի 2023-2024 ուստարվանից:

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի Արտաքին կապեր և միջազգայնացում չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ դեռ պլանավորվող գործողություններ են:

ՆՊԱՏԱԿ 6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր: Նպաստել Քոլեջում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը

Ամփոփում

Այսպիսով, ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի Արդիական հետազոտություններ և նորարարություն չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված

նպատակներին համապատասխան խնդիրները դեռ չեն իրականացվել, հետևաբար, անհրաժեշտ է բացահայտել գործընթացների իրականացման խոչընդոտները, ինչը կարող է տանել հետագա թիրախների սահմանմանը:

ՆՊԱՏԱԿ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խնդիր: Քոլեջում որակի ապահովման մշակույթի կատարելագործում

Ցուցանիշ 1. ՈՆԱ քաղաքականություն, իրականացված աշխատանքներ. Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է Քոլեջի Որակի ներքին ապահովման քաղաքականությունը, նախագծային փուլում է Որակի ներքին ապահովման ձեռնարկը: Ինչ վերաբերում է ՈՆԱ աշխատանքներին, ապա գործնականում իրականացվում է քոլեջի ռազմավարական պլանին համապատասխան, որակի ապահովման կրթական, հետազոտական, կազմակերպչական տարաբնույթ գործընթացներով՝ բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ:

Որակի ներքոլեջային գնահատման հիմնական օբյեկտներն են՝

- **կրթական ծրագրերը և դրանց առանձին բաղադրիչները** (շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցումների վերլուծություն և արդյունքների ուսումնասիրում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվության վերլուծություն և քննարկում):
- **Դասախոսական կազմի որակը** (դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցումների, ֆոկուս խմբերի արդյունքների վերլուծություն, դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, քննարկում):
- **Դասավանդման, ուսումնառության և գնահատման որակը** (ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվել է 2019թ. վերանայված «Ուսանողի գիտելիքների ստուգման գնահատման և բողոքարկման» կարգի համաձայն: Ուսանողների առաջադիմության վերաբերյալ յուրաքանչյուր ուստարի Մանկավարժական, ապա Տնօրինական խորհրդներում, ուսումնական մասի վարիչը մանրամասն տեղեկատվություն են ներկայացնում /ընթացիկ ելույթներով, ինչպես նաև տարեկան հաշվետվությամբ/:
- **Քոլեջի հետազոտական գործունեության մշտադիտարկում** (ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, վերլուծություն և քննարկումներ դեռ չի իրականացվել:
- **որակի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը** (վերապատրաստման արդյունավետության ինքնագնահատում և գնահատում մշակված ձևաչափերով):

Ցուցանիշ 2. ՈԱ հարցումների անցկացման կարգ, իրականացված հարցումներ:

ՈՆԱ քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով և ներքին ու/կամ արտաքին փորձագիտական եզրակացությունների, որակական հետա-զոտությունների, վերլուծությունների հիման վրա, որոնց ընթացքում ձևավորվում են վերանայման, բարելավման առաջարկություններ:

Սա նախատեսված է իրականացնել 2021-2023 թթ. ընթացքում առնվազն 1 անգամ:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի վերահսկման նպատակով մշակվել, հաստատվել, լրամշակվել են մի շարք կանոնակարգեր, որոնք կտեղադրվեն Քոլեջի պաշտոնական կայքում՝ www.grigoris.am

Որակի ապահովման քաղաքականության գնահատման փաստաթղթերը ներկայացվում են նիստերին (Ընդհանուր ժողովի, Տնօրինական և մանկավարժական խորհուրդների և ամբիոնի), ուսանողներին, դասախոսներին, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմին, գործատուներին և այլ շահակիցներին հանդիպումների ժամանակ, ինչպես նաև տեղադրվում է Քոլեջի պաշտոնական կայքում:

Ցուցանիշ 3. Գործող հետադարձ կապի մեխանիզմ:
Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի մեխանիզմների մասին են վկայում տնօրենի տեղակալի, ուսումնական մասի վարիչի, պրակտիկայի և կարիերայի պատասխանատուի, ՄՌԿ և ընդհանուր բաժնի և այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների արձանագրությունները:

Ցուցանիշ 4. Վերապատրաստման ընթացակարգ, վերապատրաստված անձնակազմ. ՈԱ գործընթացներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացման գործընթացները կմեկնարկեն 2020-2021 ուստարվանից:

Ցուցանիշ 5. Իրազեկվածության բարձրացման պլան, տարեկան հանդիպումներ. Համաձայն Քոլեջի նոր կառուցվածքային սխեմայի ՈԱ պատասխանատուի և ստորաբաժանումների միջև համագործակցության աստիճանը բարելավվել է, որը նպաստել է ՈՆԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Քոլեջի ռազմավարական ծրագրի Որակի ապահովման ներքին համակարգ չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի գնահատման, կարող ենք փաստել, որ 2019-2020 ուստարվա հաշվետվողականությունը լիարժեք չէ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի
Տեղակալ ուսումնական աշխատանքների գծով՝ _____ Ն.Եգորյան
03.09.2020թ.